

ԿԱՐԾԻՔ

ՏԱԹԵՎԻԿ ՍՈԿՐԱՏԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ «NAHĠ AL-BALĀĠA-Ն ՈՐՊԵՍ ՎԱՂ
ՇՐՋԱՆԻ ՇԻԱ ԻՍԼԱՄԻ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐ»
ՎԵՐՏԱՌՈՒԹՅԱՄԲ Է. 00.05 ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ
ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՏՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Տաթևիկ Մկրտչյանի ատենախոսությունը վերաբերում է վաղ շրջանի շիա իսլամի ուսումնասիրության կարևորագույն Nahġ al-balāġa աղբյուրի (Նահիջ ալ-բալաղայի՝ «Ճարտասանության ուղի») ուսումնասիրությանը: Նահիջ ալ-բալաղա ժողովածուն ուղղահավատ չորրորդ խալիֆ և շիաների առաջին իմամ Ալի իբն Աբի Տալիբի քարոզ-ճառերի, ուղերձ-նամակների և իմաստությունների ընտրանի է, որը հավաքվել և կազմվել է որպես մեկ ամբողջական ժողովածու Աբբասյանների խալիֆայության՝ Բուիների (945-1055 թթ.) դինաստիայի կառավարման շրջանում, բաղդադյան միջավայրի հայտնի բանաստեղծ և շիա գիտնական Ալ-Շարիֆ Ալ-Ռադիի կողմից 1009/1010 թ.: Շիա մուսուլմանների համար Նահիջ ալ-բալաղան շիա իսլամի դավանաբանական ուսմունքի հիմնարար ժողովածուներից է՝ Ղուրանից հետո ամենից ընթերցվող տեքստը: Նման ժողովածուի ուսումնասիրությունը խիստ արդիական է և ուսումնասիրության միջգիտակարգային բնույթն ավելի է ընդգծում նման աշխատանքի կարևորությունը ոչ միայն ընդհանուր աղբյուրագիտության, պատմագրության, իսլամագիտության, այլև դրա բավականին վերջերս առանձնացած և զարգացման ճանապարհին գտնվող շիա իսլամի ուսումնասիրությունների համատեքստում:

Ատենախոսության ոճը, լեզուն և կառուցվածքը համապատասխանում են գիտական պահանջներին: Աշխատանքը գրվել է Նահիջ ալ-բալաղա սկզբնաղբյուրի և այլ սկզբնաղբյուրային և մասնագիտական նշանակություն ունեցող բազմալեզու արաբերեն, հայերեն, անգլերեն և ռուսերեն գրականության հենքի վրա:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից, հավելվածներից:

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, տրված են ժամանակագրական շրջանակները, մեթոդաբանական հիմքը, կիրառական նշանակությունը, օգտագործված աղբյուրների և գրականության տեսությունը:

Ատենախոսության առաջին գլուխն անդրադառնում է իմամ Ալի իբն Աբի Տալիբի՝ ինչպես շիա իսլամում, այնպես էլ սուննի և շիա իսլամի դավանաբանական ուսմունքների հետագա ձևակերպման հարցում նրա ունեցած դերին: Քանի որ ժողովածուում ներառված «տեքստի» պատմական ժամանակաշրջանը 7-րդ դարն է, իսկ ձևակերպման ժամանակաշրջանն արդեն 10-րդ դարի Աբբասյանների թուլացման և կենտրոնախույս իշխանությունների գործունեության ժամանակահատվածը, ատենախոսը ներկայացնում է նաև արձակ-բանաստեղծական սինկրետիկ բանավոր մշակույթի առանձնահատկությունները, ինչպես նաև իրանական ծագմամբ Բուիների դինաստիայի կառավարման պատմա-քաղաքական, կրոնական, սոցիալ-մշակութային և գաղափարական փոփոխությունների համատեքստը, որն էլ նախադրյալներ ստեղծեց մասնավորապես շիա իսլամի համար դավանաբանական հիմքերը ամրացնելու և կանոնականացնելու համար կարևորագույն աշխատությունների ստեղծման համար, որոնք թվում էր նաև հենց ատենախոսի հետաքրքրության աղբյուրը՝ Նահջ ալ-բալադան:

Ատենախոսության երրորդ և չորրորդ գլուխներն առավել ուշագրավ են, ծավալուն և հետաքրքիր նորույթ պարունակող վերլուծություններով: Երրորդ գլուխն առնչվում է Ալ-Շարիֆ Ալ-Ռադիի կողմից Նահջ ալ-բալադան գրի առնելու նպատակների վերհանմանը: Երկրորդ ենթագլխում ատենախոսը ներկայացնում է Նահջ ալ-բալադայի ընկալումների՝ սկսած միջնադարից (13-14-րդ դարերից) հիմնականում սուննիական հեղինակների կողմից արտահայտած կասկածների հետագիծը մինչև մեր օրեր:

Ատենախոսության վերջին՝ չորրորդ «Նահջ ալ-բալադայի կառուցվածքը և բովանդակությունը» խորագրով ամենածավալուն գլուխը կազմված է չորս ենթագլուխներից: Առանձին ենթագլուխներով ատենախոսը ներկայացնում է երեք ժանրային կառուցվածքային միավորների վերլուծությունն ինչպես կառուցվածքային, այնպես էլ բովանդակային շերտերի վերհանմամբ: Ատենախոսը ցույց է տալիս, թե ինչպես է հեղինակ-կամզողը՝ Ալ-Ռադին իմամ Ալիի տեքստերի միջոցով 10-րդ դարի համատեքստում ներկայացնում իշխանության շիայական «իդեալական» մոդելը. իշխանությունը պետք է լինի արդար և իմամի կողմից աստվածային իրավասությամբ օժտված՝ հստակ ընդգծելով ժողովրդի նկատմամբ պարտականությունը, օրենքի և արդարության անվերապահ պահպանումը՝ միահյուսված բարոյական վարքի, խնայողության և հասարակության շահի պաշտպանության հետ, ինչպես նաև ընդգծելով և՛ Աստծո, և՛ ժողովրդի առաջ հաշվետվողականության անհրաժեշտությունը և այլն:

Ատենախոսն այս համատեքստում Նահջ ալ-բալադայում արտահայտված քաղաքական-բարոյական գաղափարների վերաբերյալ կատարում է հետևյալ նորույթ պարունակող եզրակացությունը. իշխանության ընկալումը որպես աստվածային վստահված պատասխանատվություն (amanah), արդարության կենտրոնական դերը և իշխողի էթիկական կերպարի շեշտադրումը համընկնում են այն նորմատիվ տրամաբանությանը, որը հետագայում համակարգվում է «Իշխանների (իշխողների) հայելի» ժանրային ձևի՝ քաղաքական խորհրդատվական գրականության շրջանակում: Ուստի ատենախոսը եզրակացնում է, որ Նահջ ալ-բալադան քաղաքական խորհրդատվական գրականության շրջանակում վաղիսլամական շրջանի կարևոր մի նմուշ է, որը գաղափարական և նորմատիվ առումով կարող էր հիմք հանդիսանալ ավելի ուշ շրջանում ժանրի դասական նմուշների ձևավորման համար, որոնք հիմնականում թվագրվում են 10–12-րդ դարերով (օր.՝ ալ-Ղազալիի Naṣīḥat al-Mulūk, Նիզամ ալ-Մուլքի Siyāsatnāma, ընդհանուր անվանմամբ adab al-mulūk և այլն):

Ատենախոսն աշխատանքի վերջին ենթագլխում Նահջ ալ-բալադայի և Ալ-Ջահիզի՝ իմամ Ալիի հարյուր ասույթների համեմատության միջոցով հետաքրքրական կերպով ցույց է տալիս նրանց կողմից իրենց ժողովածուներում ներառած տեքստի նմանությունները և տարբերությունները՝ ներկայացնելով նրանց նպատակադրությունների տարբերությունների հիմքերը:

Ատենախոսի աշխատանքը, սակայն, զերծ չէ տեխնիկական մի շարք թերություններից, դրանց թվում են վրիպակներ, միևնույն տերմինի ոչ միատարր կիրառություններ, որոշ լեզվաոճական անհարթություններ, անհարկի օտարաբանություններ, որոնք հեշտությամբ հնարավոր է փոխարինել հայերեն համարժեքներով:

Կարծում եմ, կարելի է քննարկել նաև ատենախոսի կողմից «ալ-խուլաֆա ալ-ռաշիդուն»՝ չորս ուղղահավատ խալիֆաների փոխարեն «առաքինի խալիֆներ» եզրույթի կիրառումը, որը, թերևս, հայալեզու արևելագիտության մեջ նոր կիրառություն է, և կարիք ունի որոշակի մեկնաբանության:

Նշված դիտողություններն, իհարկե, էականորեն չեն ազդում ատենախոսության արժանիքների վրա: Դրանց շտկումներն ատենախոսին օգտակար կլինեն հետագա ուսումնասիրություններ իրականացնելիս, ինչպես նաև այս ուսումնասիրությունը՝ որպես մենագրություն հրատարակելու պարագայում: Տաթևիկ Մկրտչյանը կատարել է ուշագրավ և հայաստանյան իրականության մեջ ինչ-որ առումով եզակի մի աշխատանք, որտեղ նկատելի են փորձառու-վաստակաշատ ղեկավարի՝ պրոֆեսոր Դավիթ Հովհաննիսյանի խորհուրդները:

Օգտվելով առիթից՝ կցանկանալի ընդգծել ԵՊՀ արաբագիտության ամբիոնի բացառիկ շնորհակալ դերը Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն որակավորմամբ արաբագետների և իսլամագետների, թե՛ պատմաբանների, աղբյուրագետների, և թե՛ բանասերների պատրաստման գործում: Այսօրվա ատենախոսն էլ մեր արաբագիտության և իսլամագիտության դպրոցի արժանավոր սաներից է, ինչպես նաև արաբագիտության ամբիոնի դասախոս: Ատենախոսի՝ իսլամագիտության բնագավառում ունեցած մասնագիտական պատրաստվածությունն ու արաբերենի հիմնարար գիտելիքները նպաստել են ատենախոսության պատշաճ կերպով շարադրմանը: Կարծում եմ նման աշխատանքների հետագա պաշտպանությունները նույնպես պետք է խրախուսվեն:

Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները ներկայացվել են հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում: Ուսումնասիրելով ատենախոսությունը և այդ թեմայով հեղինակի հրատարակած աշխատանքները հանգել ենք հետևյալ եզրակացության. Տաթևիկ Սոկրատի Մկրտչյանի «Nahğ al-balāğā-ն որպես վաղ շրջանի շիա իսլամի ուսումնասիրության աղբյուր» վերտառությամբ է. 00.05 «պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ին, իսկ նրա հեղինակն արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Երևանի պետական համալսարանի

թյուրքագիտության ամբիոնի վարիչ՝

պ.գ.թ., պրոֆեսոր Ալ. Սաֆարյան

17, փետրվարիի 2026 թ.

Ալ. Սաֆարյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ զիտքարտուղար



Մ. Հովհաննիսյան